

նամակը յետոյ կը պարզէ թէ քաղաքին շէյխերուն ներկայու-
թեան՝ Մինաս պապան թէև ղիֆիզ կարգուած է, բայց որպէսզի
հաստատուն ըլլայ իր վէքիլութիւնը՝ Պոլիս կը զրկուի ան՝ իր
պաշտօնը վաւերացնել տալու համար. Մինաս պապա իր վէքի-
լութիւնը հաստատելու և վանքին պարտքին կարգադրութեան
համար Պոլիս կ'երթայ և կը վերադառնայ. անոր վէքիլութիւնը
կը տեէ մինչև Աւետիք պտրք. որ Երուսաղէմի պատրիարքու-
թիւնը միացնելով Պոլսի պատրիարքութեան հետ՝ հաշիւ կը պա-
հանջէ Մինաս պապայէն. վերջինս դատարանի միջոցաւ հա-
շիւները կուտայ և անպարտ կ'արձակուի: Մինաս պապայի ղիֆիզ
կարգուելու մասին ուխտաւորներու զրկած վերոյիշեալ նամակի
օրինակը տեսնել Ս. Յակոբի վանքին ղիւանոտան հին վաւերա-
գրիներուն մէջ: Մինաս պապա վախճանած է 1707ին: 1703—
1715 Ս. Յակոբի վանքը կը կառավարեն աշխարհական տեղակալ-
ներ. որոնց ճշգրիտ և տխուր պատկերը կը նկարագրէ Հակոբ
իւ Երուսաղէմի Պատմութեան մէջ (էջ 105—112):

ՄինԱՍ (Տեր). — Հայոց Ս. Հրեշտակապետաց վանքի եկե-
ղեցիին Ս. Հովհիսիմէի մատուռին աւանդատան տախտակեայ
գրան վրայ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի հիզն: մեծ թվկնին: ՌՂԸ (=1649) աւելին: Կղմյի դուն:
Աբ: Տճրիս յիշտկ տր Մինասին, ձեռմբ համթեցի ճարտպետի».
այս յիշատակարանը փորագրուած է գրան ճիշդ վերի կողմը
մէջտեղը շինուած խաչի մը երկու կողմերը: Արձանագրութեանս
մէջ յիշուած տր. Մինասի ինքնութիւնը մեզ անծանօթ է եւ
նաև յայտնի չըլլար թէ ան եկեղեցական ի՞նչ աստիճան ունէր:
Դրան այժմու զետեղուած տեղը չյարմարիր գրան արձանա-
գրութեան իմաստին, հաւանական է որ այս դուռը Ս. Յակոբի
տաճարին Ս. Մինասի մատուռին հին դուռն է որ նոս բերուած
ու զետեղուած է երբ նոր դուռը շինուած է նոյն մատուռին
համար: Նոյն տէր Մինասը 1662 ին ալ շինել տուած է Ս. Յա-
կոբի տաճարին մէջ Ս. Մակարի գրան սատափեայ փեղկերը և
հաստատած է հետեւեալ յիշատակարանը. «Աստուած ողորմի
տէր Մինասին, որ հողաց զամենայն ծախս սորին, դուռս յի-
շատակ սուրբ գլխադրին, կազմեալ ձեռմբ Մելիտոնին, տե-
սանողքդ ասէք զտէր ողորմին, համայն ազգի նախնեաց նո-
րին, ի թուին ՌՃԺԱ.» (=1662):